Կարծիք

Ռուզաննա Նորիկի Սայիյանի

‹‹Հովհաննես Գրիգորյանի պոեզիայի առանձնահատկությունները›› ատենախոսությունը

Ռուզաննա Սայիյանի ատենախոսությունը նվիրված է անցյալ դարի 60-70-ական թթ. գրական նոր սերնդի առաջատար բանաստեղծ Հովհ.Գրիգորյանի պոեզիայի առանձնահատկությունների ուսումնասիրմանը:

Ատենախոսության առաջին՝ ‹‹1960-ականների գրական նոր սերնդի ուղին›› գլխում ատենախոսը ներկայացրել է սերնդի անցած ճանապարհը, ինքնատիպ լեզվամտածողությունն ու աշխարհընկալումը, պոեզիա բերված նորույթը՝ վերլիբրը՝ յուրօրինակ խորքով ու արտահայտությամբ, և գրաքննադատության արձագանքն այդ ամենին: Հանգել է հետևյալ եզրահանգման. ‹‹Հիրավի, նոր սերունդը հավատարիմ մնալով իր արվեստի արյան անկեղծությանն ու դավանանքին, ասում է իր նոր խոսքը, որն, ի դեպ, ազատ ու անկաշկանդ է ստեղծագործական մտածողության ու վերարտադրման ձևերում: Պատահական չէ, որ վերլիբրը դարձել է նոր սերնդի պոեզիայի կառուցակարգ››:

Ատենախոսության երկրորդ՝ ‹‹Հեգնանքը Հովհաննես Գրիգորյանի պոեզիայում›› գլխում ատենախոսը կարողացել է տեսնել Հովհաննես Գրիգորյանի ստեղծագործությունների հոգեբանական խորքը, հեգնանքով ստվերված իրականության ողբերգությունները: Տեղին է ասված. ‹‹Հովհաննես Գրիգորյանը ‹‹անբանաստեղծական›› անակնկալներով ազդարարեց մի նոր հեղաշրջում՝ հավատարիմ մնալով իր՝ ‹‹արվեստի արյունն անկեղծությունն է›› դավանանքին:

Հովհաննես Գրիգորյանը հայրենի քնարերգության մեջ ստեղծեց իր դպրոցը, ատենախոսը կարողացել է ժամանակակիցների ընդհանուր համապատկերում ցույց տալ բանաստեղծի տաղանդի մեծությունը, նրա պոեզիայի առանձնահատկությունները:

Ժամանակին ես այսպիսի բնորոշում եմ տվել Հովհ. Գրիգորյան բանաստեղծի հեղափոխական տեսակին. «Չարենցի ու Սևակի ժառանգորդությամբ երգի հեղափոխական է նաև Հովհաննես Գրիգորյանը: Ինչո՞վ: Նախ՝ դարի առաջադրած գլխավոր՝ «անբանաստեղծական բանաստեղծության» վարպետ կիրառությամբ: Եվ ապա՝ մեր ազգային դիմագծի ամբողջականությամբ: Նա տեղ չի թողնում երգում ամբողջականության ֆունկցիոնալ խախտումների համար: Ծառի ճյուղին կանաչ տերև չի սազեցնում՝ գարնան պատրանք ստեղծելով, ծառարմատին ցող է

կաթեցնում սիրո, հողի, արևի ու, խնդրեմ, «գարունն այստեղ է». «...եվ ահա նրա առաջին տերևը տեղ է հասել, ինչն է զարմանալի՝ բոլորովին անվնաս»: <....> Հովհաննես Գրիգորյանը հոգեբան բանաստեղծ է: Եվ այստեղ նա ամենաինքնատիպն է ժամանակակից քնարերգության մեջ: Հայ և համաշխարհային գրականության ավանդների յուրացման ու համադրման նրա սկզբունքային կիրառումների մեջ առանցքային տեղ ունի Դոստոևսկու դասը: Հովհաննես Գրիգորյանը պահի նկարագրությունների չի դիմում՝ ժամանակի կերպարը ներկայացնելու համար, պարզապես նա գնում է հոգեսույզ որոնման»:

Ատենախոսը հստակորեն ցույց է տվել Հովի. Գրիգորյանի ստեղծագործություններում արտացոլած ժամանակը, նրա մեջ ապրող մարդուն, որն անթաքույց սիրահարված է օրվան՝ որպես կյանքի հրաշքի: Ընկալել ու սիրել օր - իրողությունը՝ անկախ ամեն ինչից: Մեկ ուրիշ բացարձակ իրողություն է հայրենիքը՝ «կրծոտված մեղրաբլիթը», որից մնացել է բռաչափ պատառ, իսկ բանաստեղծը հատուկ տեղ ունի նրանում:

Պատահական չէ, որ պատերազմների մղձավանջով անցած հայուհին շատ խորն ու հուզական է մոտենում Հովի. Գրիգորյանի հայրեներգերին, զգում տողատակերի տագնապն ու ցավը, որոնք ասես հրամայում են. «...և սերն ու ցավը քեզ ասում են ապրիր»:

Ապրեցնող ու ապրումակցող է Հովի. Գրիգորյանի հատկապես հետանկախության շրջանի ստեղծագործությունները, որում առավել ակնառու է բանաստեղծի կեսադիրքը, գաղափարական դիրքորոշումը: Ճիշտ է նկատել ատենախոսը. «Խոսքը հատկապես կերպափոխվող հասարակության համահարթեցվող որոշ արժեքների ու բարքերի, իրականության այս կամ այն երևույթի կամ անշրջելի իրողությունների մասին է: Հովի. Գրիգորյանն ունի գաղափարների ու արժեքների սեփական աշխարհը, որում ինքն ապրում է՝ հակադրվելով իրականությանը»:

Երկրորդ գլխի եզրահանգումը հետևյալն է. «Հովի. Գրիգորյանի մինչանկախության շրջանի պոեզիային բնորոշ են ինտելեկտուալ և հուզական ապրումները, պոեզիայի էպիկականացումը՝ վերլիբրի կիրառմամբ: Հետանկախության շրջանի ստեղծագործությունները ևս յուրատիպ են խոհի, ըմբռնման, համոզմունքների ու հետաքրքրությունների արտացոլման առումով: Մի ամբողջ աշխարհ կա գրիգորյանական պոեզիայում, որն ընթերցողի առաջ բացում է հայրենիքը սիրելու, ճշմարիտ ապրումին ու խոհին հարազատ լինելու մղումը»:

Երրորդ՝ «Հովհաննես Գրիգորյանի պոեզիայի բանարվեստը» գլխում ատենախոսը ներկայացրել է Հովի. Գրիգորյանին՝ որպես ինքնատիպ լեզվամտածողություն ունեցող բանաստեղծի, ով բառ- պատկերի նորովի կերտողն է՝ ազատ ձևաչափով: Այս գլխի եզրահանգումն հետևյալն է. «Նաև բանարվեստի մեջ է արտահայտված Հովի. Գրիգորյանի բանաստեղծական տեքստի ճշմարտությունը՝ իրականության ու ասելիքի հարաբերակցությամբ: Պատահական չէ, որ նրա

բառապաշարի լեզուն աչքի է ընկնում իր անկեղծությամբ, պարզությամբ ու չհորինվածությամբ»:

Թե՛ որպես գեղագետ, թե՛ որպես մտածող Հովհաննես Գրիգորյանը բոլորովին նոր երևույթ է մեր քնարերգության մեջ: Նա իր մնայուն տեղն ունի հայոց մեծերի դասակում: Եվ ողջունելի է նրա պոեզիայի գեղագիտական ու գաղափարական առանձնահատկությունների լուսաբանմանը նվիրված Ռուզաննա Սայիյանի աշխատանքը:

Ատենախոսը հասել է իր նպատակին՝ համակողմանիորեն բացահայտելով ու մեկնելով Հովի. Գրիգորյան բանաստեղծին ու նրա ստեղծագործությունները: Այն ծանրակշիռ գործ է: Ես միջնորդում եմ, որպեսզի ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհուրդը բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան շնորհի ‹‹Հովհաննես Գրիգորյանի պոեզիայի առանձնահատկությունները›› գիտական ատենախոսության հեղինակին:

Վարդան Հակոբյան / /

Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» պետհավատարմագրված համալսարանի ռեկտոր,բանասիրական գիտությունների դոկտոր,պրոֆեսոր

11.10.2021թ.